ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

"_09_" հոկտեմբերի 2012թ № 127-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ 21-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ <<ՍՅՈՒՆԻՔ>> ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՓԱՌԱՏՈՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ <<ԿԱՊԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՍՈՒԲՍԻԴԻԱ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ, ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿԱԶՄԸ, ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ, ԾՐԱԳԻՐԸ, ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> ՆՀ-728 հրամանագրի 1.12 կետի բ) և 1.19 կետի ա) ենթակետերի դրույթներով, համաձայն <<Հայաստանի Հանրապետության 2012թ. պետական բյուջեի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 08.02.05.03. <<Մշակութային միջոցառումների իրականացում>> ծրագրով նախատեսված հատկացումների՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության անկախության 21-ամյակին նվիրված <<Սյունիք>> մարզամշակութային փառատոն կազմակերպելու նպատակով 800.0 հազ. դրամ տրամադրել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզային ենթակայության <<Կապանի մշակույթի կենտրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպությանը, նրա հետ կնքելով համապատասխան պայմանագիր:
2. Հաստատել <<Սյունիք>> մարզամշակութային փառատոնի կազմակերպման և անցկացման կազմկոմիտեի կազմը, կանոնադրությունը, անցկացման ծրագիրը, ծախսերի նախահաշիվը և ժամանակացույցը՝ համաձայն 1-5 հավելվածների:
3. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ միջոցառումների և գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2012թ. հոկտեմբերի 9
ք. Կապան

Հավելված 1
Հաստատված է
ՀՀ Սյունիքի մարզպետի
2012թ. հոկտեմբերի 9-ի
N 127- Ա որոշմամբ

ԿԱԶՄԿՈՄԻՏԵ

Հայաստանի Հանրապետության անկախության 21-ամյակին նվիրված << Սյունիք >> մարզամշակութային փառատոնի կազմակերպման և ամցկացման

1. Ս. Խաչատրյան	-	ՀՀ Սյունիքի մարզպետ, նախագահ
2. Վ. Գրիգորյան	-	ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ, /նախագահի տեղակալ/
3. Լ. Մարգարյան	-	ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ
4. Ա. Մարդյան	-	ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ
5. Ս. Դավթյան	-	ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի պետ
6. Ա. Աթայան	-	Կապանի քաղաքապետ /համաձայնությամբ/
7. Ն. Ոսկանյան	-	Գորիսի քաղաքապետ /համաձայնությամբ/
8. Ս. Հայրապետյան	-	Մեղրիի քաղաքապետ /համաձայնությամբ/
9. Մ. Զաքարյան	-	Ագարակի քաղաքապետ /համաձայնությամբ/
10. Վ. Գևորգյան	-	Քաջարանի քաղաքապետ /համաձայնությամբ/
11. Ա. Հակոբջանյան	-	Սիսիանի քաղաքապետ /համաձայնությամբ/
12. Վ. Արզումանյան	-	«Կապանի մշակույթի կենտրոն>> ՊՈԱԿ-ի տնօրեն

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար Ռ. Ղազարյան

Հավելված 2
Հաստատված է
ՀՀ Սյունիքի մարզպետի
2012թ. հոկտեմբերի 9 -ի
N 127- Ա որոշմամբ

Ծ Ր Ա Գ Ի Ր

Հայաստանի Հանրապետության անկախության 21-ամյակին նվիրված «Սյունիք » մարզամշակութային փառատոնի կազմակերպման և անցկացման

- ՀՀ Սյունիքի մարզում անց է կացվելու «Սյունիք » մարզամշակութային փառատոն
- Փառատոնը նվիրված է ՀՀ անկախության 21-րդ տարեդարձին և մեծանուն բանաստեղծ Ե. Չարենցի ծննդյան -115 և Սայաթ-Նովայի ծննդյան 300-ամյակին
- Փառատոնի նպատակն է նպաստել մարզի դպրոցականների շրջանում ներկայացնելու հայ պոեզիայի նկատմամբ սիրո և հայրենասիրության դաստիարակությանը, շնորհալի և տաղանդաշատ երեխաների հիայտ բերումը և մասնակցությունը հայ մեծանուն բանաստեղծ Ե. Չարենցի ծննդյան -115 և Սայաթ-Նովայի ծննդյան 300-ամյակին նվիրված տոնակատարություններին, ազգային արժեքների գնահատումը,հայրենասիրական գաղափարների դրսևորումը,գեղագիտական դաստիարակության խնդիրների իրականացումը, միասնական հայրենիք կերտելու գաղափարը:
- Փառատոնը անց է կացվելու երկու փուլով, առաջին փուլը մարզի համայնքներում ս/թ հոկտեմբեր ամսին, իսկ մարզային եզրափակիչ փուլը անց է կացվելու ս/թ նոյեմբեր ամսին՝ Գորիս քաղաքում:
- Փառատոնի շրջանակներում կանցկացվեն բազմաբնույթ մշակութային և սպորտային միջոցառումներ, ավանդական ազգային խաղեր:
- Համայնքներում անցկացված լավագույն խմբերը կմասնակցեն մարզային փուլին:
- Պսակադրություն կկատարվի զոհված և անհայտ ազատամարտիկների հուշարձաններին:
- Փառատոնի մասնակիցների այցելություն Ակսել Բակունցի տուն թանգարան և Գորիսի երկրագիտական թանգարան.
- Այցելություն Գորիսի պատմամշակութային վայրեր.
- Փառատոնի շրջանակներում կկազմակերպվի հանդիպում-համերգ Սյունիքի մարզում տեղադրված «Ն» զորամասերի զինծառայողների համար:

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար Ռ. Ղազարյան

Հավելված 3
Հաստատված է
ՀՀ Սյունիքի մարզպետի
2012թ. հոկտեմբերի 9 -ի
N 127- Ա որոշմամբ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության անկախության 21-ամյակին նվիրված <<Սյունիք>> մարզամշակութային փառատոնի կազմակերպման և անցկացման

Նպատակը և խնդիրները

ա/ Նպաստել մարզի դպրոցահասակ երեխաների գեղագիտական դաստիարակության զարգացմանը, հայ պոեզիայի նկատմամբ սիրո և հայրենասիրության դաստիարակությանը,հայ մեծանուն բանաստեղծ Ե. Չարենցի ծննդյան 115 և Սայաթ-Նովայի ծննդյան 300-ամյակի տոնակատարությունների կազմակերպմանը:

բ/ Բարձրացնել երեխաների մոտ հայրենիքի նկատմամբ սերը, միասնական հայրենիք կերտելու գաղափարը, շնորհաշատ և խոստումնալից կատարողների հայտնաբերմանը:

գ/ Երեխաների լայն ընդգրկվածության ապահովումը մշակութային և գեղարվեստական խմբերում.

դ/Նպաստել ուսումնական հաստատություններում սովորողների ակտիվ հանգստի կազմակերպմանը, առողջ ապրելակերպի ձևավորմանը,պոեզիայի նկատմամբ սերը և հայրենասիրության դաստիարակությանը.

Ղեկավարումը

Փառատոնի կազմակերպման և անցկացման ընդհանուր ղեկավարումը իրագործում են ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության,մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժինը և «Կապանի մշակույթի կենտրոն» ՊՈԱԿ-ը:

Մասնակիցները

ա/Փառատոնին մասնակցում են մարզի համայնքների շնորհալի երեխաները և անհատ կատարողներ, որոնք ընդգրկված են 2 տարիքային խմբերում:

բ/ Տարածաշրջաններում անցկացված մրցույթներում հաղթող ճանաչված լավագույն երեխաներն ու անհատ կատարողները կմասնակցեն մարզային փուլին.

գ/ Մարզային մրցույթում հաղթող ճանաչված լավագույն անհատ կատարողները կմասնակցեն հանրապետական եզրափակիչ փուլին:

Փառատոնի անցկացման վայրը և ժամկետը

Փառատոնի մարզային փուլը անց է կացվելու 2012թ. նոյեմբեր ամսին Գորիս քաղաքում

Ծախսերը

Մարզային փառատոնի ծախսերը հոգում է կազմակերպող կազմակերպությունը.

Հայտերը

Մարզային փուլի մասնակցության հայտերը ներկայացնել մարզպետարանի մշակույթի և սպորտի բաժին , մինչև ս/թ հոկտեմբերի 15-ը. հեռ. 0285-2-36-02:

Պարգևատրում

Հաղթողները կպարգևատրվեն ՀՀ Սյունիքի մարզպետի շնորհակալագրերով, պատվոգրերով և հուշանվերներով:

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար Ռ. Ղազարյան

Հավելված N 4
Հաստատված է
ՀՀ Սյունիքի մարզպետի
2012թ. հոկտեմբերի 9-ի
N 127-Ա որոշմամբ

Ն Ա Խ Ա Հ Ա Շ Ի Վ

Հայաստանի Հանրապետության անկախության 21-ամյակին նվիրված <<Սյունիք>> մարզամշակութային փառատոնի կազմակերպման և անցկացման

h/h	Ծախսերի անվանումը	Հոդված	Գումարը /դրամ/
1	Մասնագիտական ծառայությունների ձեռք բերման ծախսեր	4240.00	135.0
2	Տրանսպորտային միջոցների վարձակալում	4216.21	145.0
3	Սարքեր և սարքավորումների վարձակալում	4216.22	40.0
4	Հանրային սննդի ծառայության ծախսեր	4236.21	185.0
5	Նվերներ	4237.12	165.0
6	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ /անհրաժեշտ ապրանքների ձեռքբերում/	4239.11	80.0
7	Գրասենյակային նյութեր և ապրանքներ	4261.11	50.0
	Ընդամենը		800.0

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար Ռ. Ղազարյան

Հավելված 5
Հաստատված է
ՀՀ Սյունիքի մարզպետի
2012թ. հոկտեմբերի -ի
N 127- Ա որոշմամբ

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հայաստանի Հանրապետության անկախության 21- ամյակին նվիրված <<Սյունիք>> մարզամշակութային փառատոնի կազմակերպման և անցկացման

Հ/հ	Միջոցառման անվանումը	Ժամկետը	Վայրը
1	Փառատոնի I փուլ	հոկտեմբեր 2012թ.	մարզի համայնքներում
2	Փառատոնի II փուլ	նոյեմբեր 2012թ.	Գորիս քաղաք
3	Փառատոնի մասնակիցների դիմավորում	05.11.2012թ. ժամը 11^{30}-ին	Գորիս, Գ.Տաթևացու հրապարակ
4	Պսակադրություն Արցախյան ազատամարտում զոհվածների հուշարձանին	05.11.2012թ. ժամը 11^{30}-12^{00}	ք. Գորիս հուշահամալիր
5	Փառատոնի բացումը Ճաշ Մարզային փառատոնի եզրափակիչ ելույթներ՝ մրցանակաբաշխություն, փառատոնի փակման արարողություն	05.11.2012թ. ժամը 12^{00}-15^{00} 15-00-16-00 16-00-18-00	Գորիսի մշակույթի կենտրոն
6	Այցելություն Գորիսի պատմամշակութային վայրեր և թանգարաններ	18-00-19-00	Ա.Բակունցի տուն թանգարան, Գորիսի երկրագիտական թանգարան

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար Ռ. Ղազարյան